Գուրգեն Մահարի

Ծաղկած փշալարեր

Այդ օրը:

Այդ օրը գործարար բակի պետ Իվան Բիչկոն բրուտանոց մտավ անբաժան կարճ մտրակը ձեռքին ետ ու առաջ շարժելով, մի կնոջ ուղեկցությամբ: Մեծ փորձառություն ունենալու կարիք չկար գուշակելու, որ կինը կալանավորուհի էր եւ պատկանում էր Չիտայից եկած նոր էտապին: Այդ էին վկայում նրա չարչարված, տնային մոխրագույն թեթեւ վերարկուն, այլեւ ծռված կրունկներով կանացի կիսակոշիկները:

Եթե փորձենք որոշել կնոջ դեմքի գույնը, ապա անվերապահորեն պիտի ասենք, որ կարմիր էր, սակայն այդ կարմրությունը ոչ մի կապ չուներ ոչ բանաստեղծների երգած կարմիր վարդի, ոչ զատկվա կարմիր հավկիթի, ոչ արեւի, ոչ էլ ուրիշ կարմրությունների հետ: Դա մի գունատ, բծավոր, խաթարված պուտերով կարմրություն էր, որը նրան տալիս էր հիվանդագին տեսք: Նիհար էր նա կալանավորական նիհարությամբ եւ եթե չլինեին բարակ հոնքերի տակից նայող աշխույժ ու քննող, ավելին, հասկացող աչքերը, ապա կարելի էր նրան ոչ ավելի, ոչ պակաս՝ շարժուն ու թարմ դիակ համարել:

Բրուտանոցը վաղուց կին չէր տեսել: Լյալյայի հետ կապված հիշողությունների վերջին մուժ ու փոշին տարավ իր հետ Սանոն: Վերջինիս անիվի վրա հայտնվեց լիտվացի բարալիկ մի տղա՝ դեղին հոնքերով եւ ավելի դեղին բեղերով Իոնասը, որը գիտեր ամաչկոտ ու վախավոր ժպտալ, ժպտալ միատեսակ ժպիտով Մամոյին եւ ամենամեծ աստիճանավորին, ժպտալ, երբ մի հարց էին տալիս եւ

նա պատասխանում էր իր դժվար ռուսերենով, ժպտալ, երբ պտտվում էր անիվն ու ձեւավորում բարակ մատներով հողե ամանները, ժպտալ անառիթ, իր մտքերին եւ հիշողություններին:

Վի՛նի՛մանյե՛, գոռաց Մամոն տաշտի միջից պետք եղածից ավելի բարձր ձայնով, եւ անիվները լռեցին: Պետը, գոհ Մամոյից ու աշխարհից, դիմեց Աշոտ դայուն:

Վերցրեք սրան, թեեւ չգիտեմ, թե ինչի կարող է պետք գալ: Կար ու ձեւ անել չգիտե, ֆիզիկական աշխատանք կատարել չի կարող…

Ես գրագետ եմ, քաղաքացի պետ, լսվեց կնոջ բարակ ու երգեցիկ ձայնը, ես ավարտել եմ Բեռլինի նկարչական ակադեմիան… ես…

Իսկ ո՞ւմ է պետք այդ քո նկարչությունը, մեզ նկարիչներից ավելի ներկարարներ են հարկավոր, ասաց Բիչկոն կտրուկ ու գործնական, ժամանակները ծանր են, պետք է հարմարվել…

Վերջին նախադասությունը նա արտասանեց ասես որպես մեջբերում եւ ժպտաց: Այստեղ պետք է նշել, որ Վասկա Բիչկոն նույնպես կալանավոր էր, սակայն՝ ազատ եւ արտոնյալ կալանավոր, որովհետեւ նա ոչ թե քաղաքական, այլ քրեական գործով էր նստած, դատապարտված էր ոչ մեծ ժամկետով եւ դրսում էլ պետ լինելու փորձով: Նովոիվանովյան ճամբարային բաժանմունքի պետը՝ խստաբարո եւ մանրախնդիր Կուցենկոն չէր սխալվել իր ընտրության մեջ, Բիչկոն տանում էր գործը մեծ հմտությամբ եւ բանիմացությամբ: Մոտ էր ճամբարային բոլոր պետերի հետ Վասկա Բիչկոն, եւ նրա խոսակցությունից կարելի էր իմանալ, թե վերջին ընդունելության ժամանակ վերջին պետն ինչ պատգամով է նրան ճանապարհ դրել: Ահա թե ինչու նրա վերջին խոսքերը հնչեցին որպես մեջբերում:

Ժամանակները ծանր են, պետք է հարմարվել…

Իսկապես, ես էլ չգիտեմ, թե ինչ կարող է անել մեզ մոտ, նորից մտահոգվեց Բիչկոն, վերցրեք, հաշվառեք ձեր բրիգադում, տեսնենք ինչ դուրս կգա…

Ու դուրս եկավ նա առանց սպասելու պատասխանի:

Ես նայեցի Աշոտ դայուն . ես ուզում էի նրա դեմքի արտահայտությունից գուշակել՝ գո՞հ է նա, թե դժգոհ: Աշոտ դային, սակայն, ամբողջովին տեսողություն դարձած՝ նայում էր Մամոյի կողմը: Ի՞նչ էր տեսել Աշոտ դային:

Կանգնել էր Մամոն տաշտակում՝ մինչեւ ծնկները կավով ծածկված, անշարժ, ասես հիպնոսացված, ու նայում էր կնոջը: Այդպես նայում է հավատացյալը սրբապատկերին, աղվեսը՝ խաղողին կամ երեւի Ռոմեոն՝ Ջուլիետային: Մամոյի բեղերն ավելի կախվել էին երկու կողմից, իսկ աչքերը… աչքերը…

Կինն, ըստ երեւույթին, տարված անուրախ մտքերով, ոչինչ չէր նկատում: Մի անգամ միայն նա վիզը երկարեց ընձուղտի նման եւ նայեց տախտակների վրա շարված չորացող ամաններին այնպիսի հայացքով, որ կարծես հաշվում էր: Հետո նա մոտեցավ Աշոտ դայու անիվին, նրա մոտ դրված պատրաստի ցեխից ցուցամատով մի կտոր պճոկեց եւ սկսեց տրորել ցուցամատով ու բթամատով:

Աշոտ դային դուրս եկավ, դազգահին դրված խավատախտակը վերցրեց, փչեց փոշին, ապա գրպանից հանեց մատիտը եւ դիմեց նորեկին .

Ձեր ազգանո՞ւնը…

Շարթ, պատասխանեց կինը եւ, չգիտես ինչու, կամաց տնքաց:

Անո՞ւնը…

Լյուդմիլա:

Հայրանո՞ւնը…

Հայրանո՞ւն, կրկնեց աղջիկը եւ կարծես նոր գլխի ընկավ, ախ, այո, հայրանուն… Կարլովնա:

Աշոտ դային գրեց:

Հիմա գնանք ինձ հետ, Լյուդմիլա Կարլովնա, դիմեց նա կնոջը եւ բացեց չորանոցի դուռը, ահա՛, տեսնո՞ւմ եք…

Դուռը ծածկվեց, եւ Աշոտ դայու խոսքերը մնացին անլսելի: Ըստ երեւույթին, նա Լյուդմիլա Շարթին ուզում էր լծել չորանոցի հետ կապված թեթեւ գործերին եւ բացատրում էր անելիքները: Սակայն, նույնպես ըստ երեւույթին, Մամոն այս կարծիքին չէր . նա մեքենաբար ոտներով կոկում էր կավը, նայվածքը հառած չորանոցի փակ դռանը: Նա չհամբերեց, դուրս եկավ տաշտից եւ չորանոցի դուռն անշշուկ հրեց: Այնտեղից լսվեց Աշոտ դայու անխռով ձայնը:

Սրանք, օրինակի համար, չորացած, թրծվելու համար պատրաստ ամաններ են: Կհավաքես իրար վրա եւ կտեղավորես ահա այս…

Մամոն հանգստացած զգուշությամբ ծածկեց դուռը, արագ մտավ տաշտը, եւ շարունակեց ոտներով հունցել կավը: